ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD OF STAFF
МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
🖷 (374 11) 818 506

№ 5/07.1/52608
«14» «12» 2017թ.

Քաղաքացի Լևոն Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան ՀՀ վարչապետին ուղղված Ձեր 2017թ. նոյեմբերի 20-ի գրության հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման ենթակա գումարներն ընդերքօգտագործողներն սկսել են վճարել 2003 թվականից՝ ՀՀ կառավարության օգոստոսի 14-ի N 1128-Ն որոշման ընդունումից հետո:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանված է ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի «Բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը, մասնագիտական հանձնաժողովի կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1128-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1079-Ն որոշմամբ:

Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն որոշման հավելված 1-ի 29-րդ կետի՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի գումարները պահվում են կենտրոնական գանձապետարանում բացված լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվին, ըստ ընդերքօգտագործողների՝ նրանցից յուրաքանչյուրի համար սահմանված կարգով բացված ենթահաշիվներում և բացառապես օգտագործվում են.

1) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող՝ նախագծով ստանձնած բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով.

2) ընդերքօգտագործողի կողմից նախագծով ստանձնած, բայց իր կողմից չիրականացված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքների կատարման նպատակով.

3) ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով բնությանը և շրջակա միջավայրին հասցված և նրա կողմից չհատուցված վնասների վերականգնման նպատակով:

ՀՀ բնապահպանության նախարարությունը ՀՀ կառավարության 2018 թվականի գերակա խնդիրների շրջանակներում նախատեսում է իրականացնել մետաղական օգտակար հանածոների արդյունահանման արդյունքում գոյացած ընդերքօգտագործման թափոնների լքված/տիրազուրկ արտադրական լցակույտերի և փակված օբյեկտների վերաբերյալ տեղեկատվական բազայի ստեղծում: Տեղեկատվության վերլուծության հիման վրա նախատեսվում է մշակել շրջակա միջավայրի աղտոտվածության կանխման/նվազեցման միջոցառումների իրականացման անհրաժեշտության վերաբերյալ առաջարկություններ և ներկայացնել ՀՀ կառավարություն:

Հարգանքով՝

Հ.Հովհաննիսյան

ՏՀՀԿ վարչություն
Ա.Սուքիասյան
011 818 517